*Հավելված 6*
*ՀՀ ֆինանսների նախարարի << 02 >> օգոստոսի 2013թ.*
*թիվ 667-Ա հրամանի*

# *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՊԸ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ*

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

**2016 թվականի ապրիլի 18-ի թիվ 16/25-2 որոշմամբ և հրապարակվում է**

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

## ՊԸ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՊԸԾՁԲ-16/25»

Պատվիրատուն՝ **ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ**-ն, որը գտնվում է ք. Երևան, Վարդանանց փակ. 8 հասցեում, ստորև ներկայացնում է **«*ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՊԸԾՁԲ-16/25*»** ծածկագրով հայտարարված **ՊԸ** ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

**Հարցադրում 1:** *Հրավերի Հավելված 3.1-ում (Հայտարարություն Մասնագիտական Փորձառության մասին) նշված է. «Մասնակիցը պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը («ա», «բ» և «գ» կետերի մասով) հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:» Սակայն հրավերի պահանջների մեջ նշված չէ, թե որ փուլում և ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն:*

**Հարցադրման ստացման ամսաթիվ:** *18.04.2016թ.:*

**Պարզաբանում:** *Հրավերի Հավելված 3.1-ով (Հայտարարություն Մասնագիտական Փորձառության մասին) հայտարարությամբ նախատեսված փաստաթղթերը ներկայացվելու են Հրավերի ՄԱՍ II Հայտ պատրաստելու հրահանգի 3.1 կետով սահմանված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից:*

*Ներկայացվող փաստաթղթերի ցանկը հստակեցվել է Հրավերի ՄԱՍ II Հայտ պատրաստելու հրահանգի 3.1 կետում, որի հետ կապված Հրավերում կատարվել է համապատասխան փոփոխություն:*

**Պարզաբանման հիմնավորում:** *Գնահատող հանձնաժողովի 18.04.2016թ. թիվ 16/25-2 որոշում:*

**Հարցադրում 2:** *Հրավերի Հավելված 3.1-ում (Հայտարարություն Մասնագիտական Փորձառության մասին) հավելված 3.1-ի «գ» կետով ներկայացված պահանջը մասնակցի կարծիքով բերում է անհավասար մրցակցային պայմանների: ՀՀ ԱՊՊԱ շուկայի 6 ընկերություններից ներկայիս առաջատար երեքի 2014թ. համար հրապարակված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններից պարզ է դառնում, որ վերոնշյալ ընկերություններից միայն մեկն է բավարարում վերոնշյալ պահանջին, ինչն իր հերթին բերում է անհավասար մրցակցային պայմանների:*

*Առաջարկվում է պարզաբանել վերոնշյալ պահանջի անհրաժեշտությունը կամ հանել այդ պահանջը:*

**Հարցադրման ստացման ամսաթիվ:** *18.04.2016թ.:*

**Պարզաբանում:** *Փոփոխության է ենթարկվել Հրավերի Հավելված 3.1-ում (Հայտարարություն Մասնագիտական Փորձառության մասին) և Հավելված 3.1-ից հանվել է «գ» ենթակետը: Նշված փոփոխությունը կապահովի հավասար մրցակցային պայմաններ ՀՀ ապահովագրական ոլորտում առաջատար ընկերությունների համար:*

**Պարզաբանման հիմնավորում:** *Գնահատող հանձնաժողովի 18.04.2016թ. թիվ 16/25-2 որոշում:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Հայկ Հովհաննիսյանին** կամ **Նարինե Հարությունյանին**:

Հեռախոս՝ +374 55 55 78 35 բջջ.

+374 10 54 06 85 քաղ.:

Էլ. փոստ՝ hho@armwater.am

Պատվիրատու՝ ***ՀՀ ԳՆ ՋՏՊԿ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ***